

ղերու մեծամասնութիւնը մահմետականացած է:

Դիտենք որ արդի անուանց մաս մը հին է. միւսները բնականապէս յընթաց դարուց փոխուած են, ոմանք այսօր պէսպէս կը հնչուին: Հնագոյն հայ ձեռագրաց մին, ՆԼԵ (= 986 Յ. Ք.) թուին գրուած, որ Կարնոյ Սանասարեան վարժարանի հաւաքման մէջ էր¹, ունի նաեւ առուծախի եւ ժառանգութեանց բաժանման բաղմնաթիւ յիշատակագրութիւններ, գլ. շ գրուած եւ դժուարընթեռնի ու սխալագիր, բայց յամենայն դէպս հին (հմմտ.՝ «պոխտիմոնտայ» եւն բացատրութիւնք,) եւ կ'երեւայ թէ Թորթումէ են: Այս տեղ կը յիշուին գիւղացիք «Խսկայ» որ անշուշտ արդի Բջիս է. վկայից մին է «Սաղսկոյ Աշոտոյ Բ(րի)ստափորի», որ ի հարկէ արդի Սաղսկն է: Տեղւոյս չէ մանրամասնել մնացեալ դժուարընթեռնի անունները: Կարնոյ Արծնեան վարժարանի Ձեռագրաց մէջ կայ Թ. 807 հին Աւետարանը² - որ անուն սորա հայր Անդոն կոչի, եւ կը վերաբերէր երբեմն եկեղեցւոյն «Որոտայ գեղջին որ է

¹ Հմմտ. Հր. Ահմեթեան, Յուշակ եւն, Թ. 1, էջ 1—2:

² Հ. Յովսէփ Վ. Բոնեան, Յուշակ, Թ. 6. անտիպ.